ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/22»

ք. Երևան

«14» հունվարի 2020թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և Կարապետ Սահակյան ԱՁ-ն, ի դեմս Կ. Սահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **8 351 000(ութ միլիոն երեք հարյուր հիսունմեկ հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ **կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով** նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 2 (երկու) տոկոսի չափով: 21Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.3 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.4 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց

թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.5 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.6 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները,

ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը
ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	Կարապետ Սահակյան Ա/Ձ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	ք. Երևան, Նուբարաշեն 8-րդ փ.2-րդ տ.
Կենտրոնական գանձապետարան	Հայէկոնոմբանկ ԲԲԸ
ՀՎՀՀ 02593108	Հ/Հ16354800345433 25
	ՀՎՀՀ 82403138
Է. Կիրակոսյան ----------	Կ. Սահակյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« » հունվարի 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման հասցեն	կատարման ժամկետը
1	79951110/1134	**Բանակի օր** **/հունվարի 28/** Տոնական միջոցառման կազմակերպում վարչական շրջանում տեղակայված զորամասում / առնվազն 1ժամ տևողությամբ / Հայ Լաո բենդ խմբի, ՀՀ Զինված ուժերի նվագախմբի մենակատար Վահե Համբարձումյանի կամ հայկական ժողովրդական և էստրադային երգիչների /առնվազն 3 երգիչ / և պրոֆեսիոնալ վարողի /նաև ասմունքող/ , պարային խմբերի մասնակցությամբ, 6-8 կվտ հզորությամբ տեխնիկայի վարձակալում, հնչունային օպերատորի ծառայությունների մատուցում: Աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ:	դրամ	225000	225000	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն(համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 28.01.2020թ.
2	79951110/1135	**Տեառնընդառաջ** **/փետրվարի 14/** Նուբարաշեն վարչական շրջանի Սրբոց Նահատակաց եկեղեցու բակում տոնին նվիրված տոնակատարության կազմակերպում ազգագրական պարի խմբերի մասնակցությամբ, ապահովում վարչական շրջանի նորապսակ զույգերի մասնակցությունը, հյուրասիրության կազմակերպում /թվով 4 սեղանի համար հայկական տարազի կտորից կարված ծածկոցների տրամադրում, 5 հատ գինի <<Վերնաշեն>> կամ համարժեքը, 4կգ թարմ խմորեղեն-գաթա, փախլավա, միջին չափի կլոր գաթա ձևավորված օրվան համահունչ 10-15 հատ, 3կգ աղանձ-տարոսիկի տեսքով փաթեթավորված, 3 մեծ ափսե հալվա, 2կգ կոնֆետ, մեկանգամյա օգտագործման ափսե և բաժակ-50-ական/ և հուշանվերների տրամադրում /ոսկյա խաչեր կամ կախազարդեր մոտավորապես 10-15 հատ / համապատասխան տվյալ տարվա նորապսակ զույգերի թվին /: Աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ:	դրամ	175000	175000	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն(համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 14.02.2020թ.
3	79951110/1136	**Կանանց տոն** **/մարտի 8/** Վարչական շրջանում գործող կրթական,մշակութային և այլ կազմակերպությունների կանանց համար 400 հատ 80սմ-ոց, ուղիղ և հաստ պոչերով, մեծ գլուխներով, փաթեթավորված հոլանդական վարդերի կամ պրիմուլա մենակյա ծաղիկների ձեռքբերում՝ փաթեթավորման համար նախատեսված թղթով, ամրացված ժապավենով, վրան փակցված թղթե բացիկ համապատասխան շնորհավորական մաղթանքով և առաքում համապատասխան կազմակերպություններ: Աշխատանքները և	դրամ	319500	319500	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն(համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 08.03.2020թ.

		փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ:		—				
4	79951110/1137	**Մայրության և գեղեցկության տոն /ապրիլի 7/** Վարչական շրջանում գործող կրթական,մշակութային և այլ կազմակերպությունների կանանց համար 300 հատ 80սմ-ոց, ուղիղ և հաստ պոչերով, մեծ գլուխներով, փաթեթավորված հոլանդական վարդերի կամ պրիմուլա մեկամյա ծաղիկների ձեռք բերում ՝ փաթեթավորման համար նախատեսված թղթով, ամրացված ժապավենով, վրան փակցված թղթե բացիկ համապատասխան շնորհավորական մաղթանքով և առաքում համապատասխան կազմակերպություններ: Աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ:	դրամ	183000	183000	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն(համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 07.04.2020թ.
5	79951110/1138	**Ցեղասպանության զոհերի հիշատակի օր /ապրիլի 24/** Այցելություն վարչական շրջանում տեղակայված Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար, ծաղկեղրման համար մեկ ծաղկեպսակի / պատրաստված բնական ծաղիկներից՝ ալստրոմերիա, գերբերա, վարդ, քրիզանթեմ, առնվազն 1մ տրամագծով / և 100 մեխակի ձեռք բերում և տրամադրում: Այցելություն Ծիծեռնակաբերդի հուշահամալիր վարչական շրջանի կրթամշակութային և մյուս գործող հաստատությունների աշխատակիցների /մոտավորապես 100 հոգի/ մասնակցությամբ, ծաղկեղրման համար մեկ ծաղկեպսակի / պատրաստված բնական ծաղիկներից՝ ալստրոմերիա, գերբերա, վարդ, քրիզանթեմ, առնվազն 1մ տրամագծով / և 200 մեխակների ձեռք բերում և տրամադրում: Ապահովում ավտոբուսով մարդկանց տեղափոխումը և ետ վերադարձը: Աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ:	դրամ	94000	94000	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն(համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 24.04.2020թ.
6	79951110/1139	**Աշխատավորի օր /մայիս 1/** 30 տարեց աշխատավորների համար տոնական հյուրասիրության կազմակերպում ռեստորանում / 3 տեսակի տաք ուտեստներ՝ խորոված խոզի, ճուտ ֆրիով և իշխան ձուկ, 3 տեսակի աղցաններ՝ մայրաքաղաքային, ցեզար, հավի կրծքամսով, սառը խորտիկներ, պանրի տեսականի, ոգելից խմիչքներ՝ ռուսական օղի, հայկական արտադրության 5տարվա հնեցման կոնյակ <<Արարատ>> կամ համարժեքը, գինի <<Վերնաշեն>> կամ համարժեքը, զովացուցիչ խմիչքներ՝ բնական հյութեր բարձր որակի, կոլա, ֆանտա, սփրայթ, մայր գործարանի ջերմուկ կամ համարժեքը, մրգեր՝ խնձոր, տանձ, նարինջ, ադամաթուզ/: Աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ:	դրամ	222000	222000	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն(համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 01.05.2020թ.
7	79951110/1140	**Հաղթանակի տոն /մայիս 9/** Տոնական երթի կազմակերպում դեպի վարչական շրջանում տեղակայված <<Անհայտ զինվորի հուշարձան և Արցախյան հերոսամարտում զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող խաչքար՝ծաղկեղրման համար թվով 2 ծաղկեպսակների / պատրաստված բնական ծաղիկներից՝ ալստրոմերիա, գերբերա, վարդ, քրիզանթեմ, առնվազն 1մ տրամագծով / և 250 մեխակների ձեռք բերում, տրամադրում և	դրամ	467000	467000	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն(համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 09.05.2020թ.

		տեղադրում հուշարձանների մոտ: Տոնական մեծ միջոցառման կազմակերպում /առնվազն 1,5ժամ տևողությամբ / վարչական շրջանի կենտրոնական զբոսայգում հայկական էստրադայի հայտնի երգիչ,երգչուհիների /առնվազն 5 երգիչ/, պրոֆեսիոնալ վարողի, ազգագրական պարի խմբերի մասնակցությամբ /երգիչների և վարողի ընտրությունը համաձայնեցնել վարչական շրջանի հետ/: Ձայնային տեխնիկայի վարձակալում 6-8 կվտ հզորությամբ, պրոֆեսիոնալ հնչունային օպերատորի ծառայությունների մատուցում, բեմի ձևավորում՝ ռեզինե,կարմիր,կապույտ,նարնջագույն,կանաչ,սպիտակ,դեղին փուչիկներով օրվան համահունչ: Հրավառություն /աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ /:						
8	79951110/1141	**Վերջին զանգ/մայիս 22-25/** Վերջին զանգի օրվան նվիրված միջոցառման կազմակերպման համար դահլիճի վարձակալում և զարդարում օրվան համահունչ /փուչիկներով և այլ դեկորացիաներով/: Վարչական շրջանի 2 հանրակրթական և Արամ Մանուկյանի անվան մարզառազմական դպրոցների շրջանավարտներին ծաղիկների, շնորհավորական բացիկների կամ հուշանվերների նվիրում, ավարտական դասարանների համար տորթեր և հայկական արտադրության կիսաչոր շամպայն /տվյալ տարվա ավարտական դասարանների և շրջանավարտների թվին համապատասխան/: Աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ:	դրամ	182000	182000	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 22-25.05.2020թ.
9	79951110/1142	**Երեխաների իրավունքներիպաշտպանության օր /հունիս 1/** Տոնական մեծ միջոցառման կազմակերպում վարչական շրջանի կենտրոնական զբոսայգում հայկական էստրադայի պատանի երգիչ, երգչուհիների /առնվազն 5 երգիչ /,պրոֆեսիոնալ վարողի, ծաղրածուների /Max և Շպունտիկ կամ Լոլիկ ու Բոլիկ –առնվազն 2ծաղրածու/,մուլտ հերոսների /առնվազն 5 կենդանակերպ/, աճպարարների, ակրոբատների կամ զսպանակ մարդու մասնակցությամբ /առնվազն 1.5-2 ժամ տևողությամբ /: Օղակներով և թևերով կամ պղպջակներով համարների կազմակերպում, դիմանկարչի և պրոֆեսիոնալ նկարչի ծառայությունների մատուցում /երգիչների, ծաղրածուների և մյուսների ընտրությունը համաձայնեցնել վարչական շրջանի հետ/: Ձայնային տեխնիկայի վարձակալում 6-8 կվտ հզորությամբ, պրոֆեսիոնալ հնչունային օպերատորի ծառայությունների մատուցում, բեմի ձևավորում ռեզինե տարբեր գույների փուչիկներով օրվան համահունչ: Կավճանկարման կազմակերպում կենտրոնական զբոսայգուն հարակից տարածքում 300 երեխայի մասնակցությամբ,100 տուփ գունավոր կավիճների տրամադրում: Հյուրասիրություն /առնվազն 500 երեխայի համար պաղպաղակի տրամադրում <<Գրանդ Քենդի>> արտադրության կամ համարժեքը /: Աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ :	դրամ	549000	549000	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն(համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 01.06.2020թ.
10	79951110/1143	**Նուբարաշենի հիմնադրման օր /հունիսի 27/** Միջոցառման կազմակերպման համար նախապես ապահովել կոմունիկացիա - գովազդ, 1000 հատ բուկլետ, 500 հատ հրավիրատոմս, Նուբարաշենի մուտքի կամուրջի ձևավորում օրվան համահունչ, գովազդային պաստառներ /big bore-վրա/, 8x12	դրամ	2990000	2990000	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն(համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 27.06.2020թ.

		հրավիրատոմս, Նուբարաշենի մուտքի կամուրջի ձևավորում օրվան համահունչ, գովազդային պաստառներ /big bore-վրա/, 8x12 չափերի բեմի տեղադրում -ապամոնտաժում, ձևավորում օրվան համահունչ, 2մ-ոց մոնիտորի տեղադրում, ժամանակակից լուսային էֆեկտներ, բեմի շրջակայքի լուսավորության ապահովում, ձայնային տեխնիկայի վարձակալում 13-15 կվտ հզորությամբ, պրոֆեսիոնալ հնչունային օպերատորի ծառայությունների մատուցում: Տոնական մեծ միջոցառման կազմակերպում վարչական շրջանի կենտրոնական զբոսայգուն հարակից տարածքում հայկական էստրադայի հայտնի երգիչ, երգչուհիների /առնվազն 10 երգիչ/, ազգագրական և ժամանակակից պարի խմբերի, պրոֆեսիոնալ վարողի մասնակցությամբ /երգիչների, պարի խմբերի և վարողի ընտրությունը համաձայնեցնել վարչական շրջանի հետ/: Պարի և սպորտային մրցույթների կազմակերպում /վազքի, ձյուդոյի, շախմատի, հեծանվավազքի, նարդու մրցույթների համար ապահովել համապատասխան վայրեր, համապատասխան գույք, տեղադրել 1,5մ-ոց տեղանշումներով փայտե ցուցատախտակներ /, մրցանակների բաշխում /մրցույթների թվին համապատասխան հաղթող թիմերին կամ անհատներին տրամադրել համապատասխան գավաթներ, պատվոգրեր, մեդալներ, նվերներ, շնորհակալագրեր/: Մանկական միջոցառման կազմակերպում 4 խաղավար ծաղրածուների, 6 մուլտ հերոսների, աճպարարների և ժանգլյորների մասնակցությամբ: Կազմակերպել հյուրասիրություն 1300-1500 հոգու համար /թվով 10 տաղավարի տեղադրում, հյուրասիրության համար սեղանների և ծածկոցների ապահովում, հյուրասիրության համար թվով 2000 կարկանդակ, 400 կտոր փախլավա, 600 հատ գաթա տարբեր տեսակի, 300 հատ փոխինդ, 10 ափսե հալվա, 16կգ թխվածքաբլիթ, 1600 հատ սուտ տոլմա, 10կգ չիր տարբեր տեսակի, 70կգ միրգ, 40 լիտրանոց 6 կաթսա հարիսա- /30կգ ձավար, 60 հատ հավ, 20կգ յուղ/, լավաշ 80 հատ, 3կգ թել պանիր, 70 տուփ անձեռոցիկ, 3000 հատ – 0,5լ ջուր, հյութ- 0,5լ կոլա, ֆանտա, սփրայթ, լիմոնադ տարբեր համերի / / աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ /: Մեծ հրավառություն:						
11	79951110/1144	**Գիտելիքի, գրի և դպրության օր** **/սեպտեմբերի 1/** Գիտելիքի, գրի և դպրության օրվան նվիրված վարչական շրջանի 2 դպրոցների բոլոր առաջին դասարանցիների համար նվերների ձեռք բերում և տրամադրում /մոտավորապես 160 աշակերտի համար գրենական պիտույքներ համապատասխան նվերի տոպրակներով -գրչատուփ, 16 թերթանի նկարչական ալբոմ, 16 թերթանի երկկողմանի գունավոր թուղթ, գրիչ, 12 գույնի գունավոր մատիտներ, սրիչ, ռետին, հասարակ մատիտ, մկրատ /, նախակրթարանի և 2 մանկապարտեզների բակում մանկական զվարճալի միջոցառումների կազմակերպում 2 խաղավար ծաղրածուների, 2 մուլտ հերոսների մասնակցությամբ: Աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ	դրամ	229500	229500	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն(համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 01.09.2020թ.
12	79951110/1145	**Անկախության տոն** **/սեպտեմբեր 21/** Տոնական երթի կազմակերպում դեպի վարչական շրջանում	դրամ	462000	462000	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն(համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 21.09.2020թ.

		տեղակայված արցախյան հերոսամարտում զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող խաչքար ծաղկեդրման համար մեկ ծաղկեպսակի / պատրաստված բնական ծաղիկներից՝ ալստրոմերիա, գերբերա, վարդ, քրիզանթեմ, առնվազն 1մ տրամագծով / և 100 մեխակների ձեռք բերում և տեղադրում: Հարգանքի տուրքի մատուցման նպատակով վարչական շրջանում գործող հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների այցի կազմակերպում <<Եռաբլուր>> զիվորական պանթեոն /35 հոգու համար ավտոբուսի տրամադրում/ և ծաղկեդրման համար 100 մեխակի ձեռք բերում և տրամադրում: Տոնական մեծ միջոցառման կազմակերպում /առնվազն 1.5 ժամ տևողությամբ/ կենտրոնական զբոսայգուն հարակից տարածքում հայ էստրադայի հայտնի երգիչ, երգչուհիների /առնվազն 5 երգիչ /, պրոֆեսիոնալ վարողի, ազգագրական պարի խմբերի մասնակցությամբ /երգիչների և վարողի ընտրությունը համաձայնեցնել վարչական շրջանի հետ/: Ձայնային տեխնիկայի վարձակալում 6-8 կվտ հզորությամբ, հնչունային օպերատորի ծառայությունների մատուցում, բեմի ձևավորում՝ ռեգինե.կարմիր,կապույտ,նարնջագույն,կանաչ,սպիտակ,դեղին փուչիկներով օրվան համահունչ, լուսային էֆեկտներ: Հրավառություն: Աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ:						
13	79951110/1146	**Ուսուցչի օր և Գրադարանավարի օր** **/հոկտեմբերի 5/** Այցելություն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ենթակայությամբ գործող կրթամշակութային հաստատություններ, հյուրասիրության կազմակերպում /13 տուփ հայկական արտադրության խմորեղեն <<Գրանդ Քենդի>> մեծ ֆուրշետ, 13 տուփ ռաֆաելլո /մեծ/, 13 հատ հայկական արտադրության կիսաչոր շամպայն,. 13 հատ բնական հյութ Դոբրի 1լ և թվով 170 մանկավարժների ծաղիկների նվիրում կամ համաչժեքը: Աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ:	դրամ	183000	183000	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 05.10.2020թ.
14	79951110/1147	**Ամանոր /դեկտեմբեր/** Վարչական շրջանի կենտրոնական փողոցների տոնական լուսային ձևավորում - (700մ լեդ լույս, 50 հատ տոնական զարդարանքի համար նախատեսված լույսեր, 200-300մ ամբալար, 150-200մ մալուխ, ամանորյա շնորհավորական բաններ 17-20մ², 10մ-ոց տոնածառի ձեռք բերում, տեղադրում վ/շ կենտրոնական հատվածում ու զարդարում, շրջակա տարածքի լուսային ձևավորում, լուսային ցանցի անցկացում, մոնտաժում, ապամոնտաժում, 8x8 չափի բեմի տեղադրում տոնածառի մոտ, ձայնային տեխնիկայի վարձակալում 6-8 կվտ հզորությամբ, պրոֆեսիոնալ հնչունային օպերատորի ծառայությունների մատուցում: Տոնական միջոցառման կազմակերպում տոնածառի շուրջ հայկական էստարադայի հայտնի պատանի երգիչների /առնվազն 7երգիչ /, պրոֆեսիոնալ պարային խմբերի մասնակցությամբ, թաթերականացված ներկայացումների կազմակերպում՝ հեքիաթի հերոսների /առնվազն 7 հերոս/, ձմեռ պապի, ձյունանուշի մասնակցությամբ /առնվազն 1,5ժամ տևողությամբ/: Վարչական շրջանի թվով 230 երեխաների Պատանի հանդիսատեսի կամ Սունդուկյանի կամ Պարոնյանի թատրոնների ամանորի տոնական հեքիաթային ներկայացման տոմսերի տրամադրում և ապահովում նրանց տեղափոխումը և ետ վերադարձը: Թվով 700	դրամ	2070000	2070000	1	Նուբարաշեն վարչական շրջան	կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն(համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.12.2020-25.12.2020թ.

		Տոնական ֆուրշետային հյուրասիրություն նախատեսված մինչև 100 անձի համար վարչական շրջանի աշխատակազմի վարչական շենքում: Աշխատանքները և փոփոխությունները համաձայնեցնել վարչական շրջանի հետ:						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Կարապետ Սահակյան Ա/Ձ
ք. Երևան, Նուբարաշեն 8-րդ փ.2-րդ տ.
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ16354800345433 25
ՀՎՀՀ 82403138

Կ. Սահակյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
« » 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀՄՁԲ-20/22 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 2.1
« » 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4.1
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/22* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան «14» 01 2020 թ.**

Ա/Ձ Կարապետ Սահակյան, նույնականացման քարտ 000283077,23.10.2012թ.067-ի կողմից
Ընկերության անվանումը

սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1Ընկերությունը մասնակցում է Երևանի Քաղաքապետարան * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ ԵՔ-ԳՀԾՁԲ-20/22* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:**

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ա/Հ Կարապետ Սահակյան

ընկերության անվանումը

ք.Երևան Նուբարաշեն 8-րդ փ.2-րդ տուն

ընկերության հասցեն

Հայէկոնոմբանկ ԲԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հ/Հ16354800345433 25

Կ.Տ

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ Կարապետ Սահակյան Ա/Ձ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝1635480034543325

7. Վճարողի ՀՎՀՀ՝82403138

8. Վճարողի ՀՇՄՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀՇՄՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 8 351 000(ութ միլիոն երեք հարյուր հիսունմեկ հազար)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ԵՔ-ԳՀՇՁԲ-20/22

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/

24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

Հավելված 5.1
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/22* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «__14__»_____01_____ 2020 թ.**

Ա/Ձ_Կարապետ Սահակյան, նույնականացման քարտ 000283077,23.10.2012թ.067-ի կողմից
Ընկերության անվանումը

սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

3. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ _ԵՔ-ԳՀԾՁԲ-20/22* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

4. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ա/Հ Կարապետ Սահակյան
ընկերության անվանումը

ք.Երևան Նուբարաշեն 8-րդ փ.2-րդ տուն
ընկերության հասցեն

Հայէկոնոմբանկ ԲԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հ/Հ1635480034543325
ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 82403138
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Կարապետ Սահակյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ Կարապետ Սահակյան Ա/Ձ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝1635480034543325

7. Վճարողի ՀՎՀՀ՝82403138

8. Վճարողի ՀՇՄՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀՇՄՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝835 100/ութ հարյուր երեսուն հինգ հազար հարյուր/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ԵՔ-ԳՀՇՁԲ-20/22

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/

24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*